

ԱՍՈՐԻՔԻ ԴՐԻՍՏՈՆԵՌԻԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ.

Կէմբրիջի համալսարանի ուսացչապետ Ֆ. Կ. Բեօրկիտտի դասախօսութիւնը*, կարգացուած Լօնդոնի ս. Մարգարիտի եկեղեցում 1904 թ.

Թարգ. ընագրից ուսերէն Ս. Պետերբուրգի Կայսերական Հոգ. Ճեմարանի ուսուցչապետ А. Сагарда. (Христ. Чтение 1914 թ. մարտ. եր. 382—403):

Ասորիքի Դրիստոնէութեան պատմութեան տեսութիւնը.

ՈՒՍ ԲԱՐԳՄԱՆՅԻ յԱՌԱՋԱՐԱՆՐ.

Կէմբրիջի համալսարի ուսուցչապետ Ֆ. Կ. Բեօրկիտտ (F. C. Burkitt), որ յայտնի է Աւետարանի հին-ասորական թարգմանութեան իւր հետազոտութիւններով, 1904 թուին Լոնդոնի ս. Մարգարիտի եկեղեցում արել է վեց դասախօսութիւն Ասորիքի քրիստոնէութեան պատմութեան մասին առաջին ժամանակներից մինչև Քաղքեղոնի ժողովը: Այդ դասախօսութիւններից ամեն մէկը, «Հին արեւելեան Դրիստոնէութիւն» ընդհանուր վերնագրի տակ մի, ըստ ամենայնի լրիւ, ամբողջութիւն է կազմում: Ե. Պրօշէնը այդ դասախօսութիւնները 1907 թուին գերմաներէն թարգմանեց. որը իւր թարգմանութեան յառաջաբանում գրում է. «Եղեսիայում քրիստոնէութեան սկզբնաւորութեան և այն հանգամանքների վե-

* Կարեւոր համարեցինք այս դասախօսութիւնների շարքը ուսերէնից հայերէնի վերածել, համարելով որ մեր հարեւան ազգի եկեղեցու պատմութեան ուսումնասիրութեան այդ աղբիւրը կարող է ծառայել որպէս միջոց մեր եկեղեցական պատմութեան ինչ ինչ կէտերը լուսարանելու: Այդ դասախօսութիւնների թարգմանութեան այլ պատճառները բացատրուած են ուս. Թարգմանչի յառաջաբանի մէջ:

Հայ թարգմանութիւնը չժանրացնելու համար յապուեցինք ուս. Թարգմանչի ծանօթութիւններից մի քանիսը, զգուշացանք եւ մեր պատմական տուեալներով նոր ծանօթութիւններ աւելացնել, Հասարակ ընթերցողների համար այլ ծանօթութիւնները անհրաժեշտ չեն, իսկ մասնագէտները կարօտ չեն մեր ծանօթութիւններին: Հայ թարգ.

քաբերութեամբ, որ կապուած են Արգար թաղաւորի մասին աւանդութեան հետ, մինչև վերջին ժամանակներս չկար մի քիչ աւելի խոր և հիմնաւոր հետազոտութիւն, որ հին ասորական եկեղեցու դրութիւնն ու զարգացումը քաղմակողմանի կերպով լուսարանէր: Ուստի և կարիք չկայ պատճառաբանելու, թէ Բեօրկիտտի դասախօսութիւնները ինչո՞ւ են թարգմանուել գերմաներէն... Հեղինակի հետազոտութիւնները—ասորական Աստուածաշնչի, հին-ասորական կրօնաւորական կեանքի և Նգեսիայի եպիսկոպոսների ցուցակի մասին—անկասկած կարող են լուծել մի քանի թէութիւններ և մի քանի էլ նոր հարցեր առաջ բերել:

Ռուս եկեղեցական-պատմական գրականութիւնը ընդհանրապէս բաւական հարուստ է. իսկ հին-ասորական եկեղեցու պատմութիւնը ուսումնասիրել է Ս. Պետերբուրգի Հոգեւոր Ճեմարանի ուսուցչապետ հանգ. Բ. Բ. БОЛОТОВ-ը միայն. ուստի և կարծում ենք որ Ֆ. Կ. Բեօրկիտտի դասախօսութիւնների ուսերէն թարգմանութիւնը կարող են օգտակար լինել այն անձանց համար, որոնք Ասորիքի քրիստոնեաների քաղղով հետաքրքրոււմ են, և որ և է պատճառով չեն կարող օգտուել Բեօրկիտտի դասախօսութիւնների անգլիերէն բնագրից:

Պարտ ենք համարում աւելացնել, որ Ֆ. Կ. Բեօրկիտտի դասախօսութիւնները թարգմանելիս՝ մի քանի տեղերում արինք աննշան յապաւումներ, որոնք բնաւ չեն փոխում կամ աղաւաղում հեղինակի միտքը:

Ա. ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ.

Նգեսիայի առաջին եպիսկոպոսներ.

Նգեսիայի քաղաքական դրութիւնը:—Քրիստոնէութեան սկզբնաւորութիւնը:—Արգար թաղաւորի մասին աւանդութիւնը:—Արգարի վարդապետութիւնը:—Տանջանքները:—Պարսիկների հետ պատերազմները:—Սրապիոն անաիօրացին:—Եպիսկոպոսների ցանկը:—Նգրակացութիւնը:—

Ասորական եկեղեցին, որի պատմութիւնը կամենում ենք այս դասախօսութիւնների մէջ ուսումնասիրել, հաւատացած էր իւր առաքելական ծագմանը, և հռովմէական կայսերութեան մէջ մեծ եկեղեցին (օրթոդոքս) արդարացի էր համարում այդ: Սերտ յարաբերութեան մէջ էր այն ասորական եկեղեցին քրիստոնէութեան բոլոր գլխաւոր կենդրոնների հետ: Տիեզերական եկեղեցին սուրբ էր համարում ասորական եկեղեցու սրբերին, եթէ դրանց համ-

բաւը հասած էր լինում իրան: Չնայելով սրան, նկատուում է որոշ տարբերութիւն Եղեսիայի, Անտիոքի և հռովմէական եկեղեցիների միջև:

Նրանք բաժանուած էին իրարից մարդկանց հաղորդակցութեան ամենազլխաւոր արգելքով—լեզուի տարբերութեամբ: Այն շրջանին, որի մասին յատկապէս պէտք է խօսենք այստեղ, թէև լեզուն հանդիսանում է հաղորդակցութեան զլխաւոր արգելք, սակայն չէր կարող այն ասորերէն խօսող քրիստոնեաներին բոլորովին անջատել նրանց յոյն և լատին եղբայրներից այնպէս, որ ասորական եկեղեցու զարգացումն բոլորովին այլ ազդեցութեան տակ առաջ գնար՝ անկախ յոյն-լատինական կայսերութեան եկեղեցու ազդեցութիւնից:

Հին-ասորական քրիստոնէութեան էութիւնը այդպէս է երևան գալիս. եկեղեցական պատմութիւնը այդ է մեզ ցոյց տալիս: Թէ ինչպէս կը լինէր եկեղեցին, եթէ նրան շրջապատող միջավայրն այլ լինէր, այդ այլ խնդիր է:

Ասորական եկեղեցու հին պատմութիւնը որոշ չափով հիմնուած է ենթադրութիւնների և եղբակացութիւնների վերայ: Պատմական աղբիւրները նուազ են. և նրա անցեալ շրջանի մասին, մինչև մեզ հասած, գրոյցների մեծագոյն մասը քաղուածներ են՝ որոնց մէջ հիւսուած են, մեր կարծիքով, երկու, իրար հակառակ, պատմական աւանդութիւններ: Բայց Դ. և Ե. դարերի ասորական քրիստոնէութեան հետ ծանօթանալու համար պէտք է մի քանի տեղեկութիւններ ունենանք Եղեսիայի եկեղեցու հնագոյն զարգացման մասին, Եղեսիայի, որ ասորերէն խօսող երկրում քրիստոնէութեան առաջին կենդրոնն էր:

Եղեսիան Եփրատից դէպի արեւելք գտնուող փոքրիկ թաղաւորութեան մայրաքաղաքն էր: Քաղաքը վերանորոգել էին յոյները և Եղեսիա անունը տուել. բայց արամեերէն խօսող բնակիչները շարունակում էին քաղաքը կոչել Ուրհա, որ անծանօթ նշանակութեամբ մի բառ է. այդ բառից յոյները կազմեցին՝ գաւառի Օսրոինա [Օսրոդն] կամ Օրբօինա [Օրբօդն] անունը, որից էլ ծագել է քաղաքի այժմեան Ուրֆա անունը: Նրա միջով է անցնում Արեւիքի բանուկ ճանապարհներից մէկը, յատկապէս այն, որ անցնում է ասորական մեծ անապատի հիւսիսային և Հայաստանի լեռների հարաւային կողմից: Քաղաքի և շրջակայքի բնակիչները խօսում են արամեերէն բարբառով, որ նման է (բայց ոչ նոյնը) այն լեզուին, որով խօսում էին Պաղեստինում մեր Տէրը և նրա առաքեալները: Հիմք կայ կարծիք, որ քաղաքը, քրիստոնէութիւնից էլ շատ առաջ քաղաքակրթութեան կենդրոն էր. մեզ հասած դուրսնետնտներից հնագոյնները աչքի են ընկնում ոճի հարթութեամբ

և թեթևութեամբ, որ նշան են յունական ազդեցութեան: Որպէս Հոռովմի կայսերութեան արևելեան սահմանների մանր պետութիւնների, նոյնպէս և Օսրոյինի թագաւորների երակներում, հոսում էր արաբական արիւն:

Վերջինիս ամենամօտ ապացոյցն է Դամասկացի Արետա, որին յիշում է Ս. Պողոսը (Բ. Կոնթ. ԺԱ. 32), և որի անունը իւր հայրենակիցները Հարէթա (Hāritha) էին գրում: Ըստ այսմ, Եդեսիայի թագաւորների մէջ էլ գտնում ենք անուններ, որոնք անկասկած արաբական ծագումն ունեն. օրինակ. Maz'ûr u Wā'el, հաւանօրէն նոյն էլ կաբելի է ասել Արգար և Մա'նու անունների մասին: Դրանք Եդեսիայի իշխանների սիրելի անուններն են: Բոլոր երեսուն իշխաններից տասն և մէկը Արգար անունն էին կրում և իննը՝ Մա'նու: Այդ անունների նշանակութիւնը բոլորովին էլ պարզ չէ:

Եդեսիայի արտաքին պատմութիւնը պետութեան սահմանադիւին եղած երկրի սովորական հանդամանքն է կրում: Սելևկիացիներին պատկանող պետութիւնը բաժանուած էր հռովմայիցիների և պարթևների միջև, և Օսրոինը գտնուում էր սահմանի վերայ: Մեր թուականութեան մինչև երկրորդ դարի վերջը Եդեսիան հռովմէական կայսրութեան մէջ չէր մտնում և, հետևաբար, զրոնուում էր Պարթևների գերագոյն իշխանութեան տակ: Տրայիանոսի օրով պատերազմների ժամանակ Եդեսիան շատ փնասուեց: 116 թ. օգոստոսին Լուսիոս Կլիսենտոսը յարձակմամբ առաւ և աւերեց: Թէև կարճ ժամանակ պետութիւնը իւր անկախութիւնը պահպանեց, բայց նրա վախճանը անխուսափելի էր: «Օսրոյինի թոյլ իշխանները», մէջ ենք բերում Գիրբօնի բառերը, «որոնք գտնուում էին երկու, իրար հակառակ, պետութիւնների սահմանների վերայ, յօժար էին միանալու Պարթևներին, բայց Հոռովմի աւելի ուժեղ իշխանութիւնը հարկադրեց իրան հնազանդելու. այս հաստատում են նրանց զրամները: Պարթևների պատերազմները աւարտելուց յետոյ, Մարկոսի (Աւրելիոս) օրով բարեօք համարուեց եդեսացիների կասկածելի հաւատարմութեան առաջ պատնէշներ կառուցանել—երկրի զանազան մասերում բերդեր կառուցուեցին և Մծրին ամուր քաղաքում հաստատուեց բերդապահ ուժեղ զօրք: Պոռովութիւնների ժամանակ, որ տեղի ունեցան Կոմմոգլի մահից յետոյ, Օսրոյինի թագաւորները ձգտում էին թօթափել հռովմէական լուծը. Սևերոսի խիստ քաղաքականութիւնը բոլորովին զսպեց նրանց, իսկ Կարակալլայի օրով ուխտադրութիւնը Օսրոյինի տատանումներին վերջ տուեց: Արգարը (այսինքն Արգար IX-ը) շրջափախեալ Հոռովմ տարուեց, նրա երկիրը հռովմէական գաւառ դարձաւ, իսկ մայրաքաղաքը գաղթավայրի աստիճանի արժանա-

ցաւ: Ըստ այսմ, պարթևների միապետութեան անկումից տասն տարի յետոյ, հռովմայեցիք բոլորովին հաստատուեցին Եփրատի միւս կողմում:

Եղեսիան, Լուսիոս Կվինտոսից այրուելուց և աւերուելուց մի հարիւր տարի յետոյ, Փրկչի 216 թուին հռովմէայեցւոց տիրապետութեան տակ ընկաւ: Այս մի հարիւր տարուայ մէջ քրիստոնէութիւնը արմատակալեց Եղեսիայում: Ես մի փոքր կանգ առայ աշխարհիկ պատմութեան ղէպքերի վերայ, որովհետեւ կարծում եմ, թէ Ասորիքի քրիստոնէութեան հնագոյն պատմութիւնը ուսումնասիրելու համար իսկապէս պէտք է որոշ գաղտփար ունենալ այդ շրջանի ղէպքերի ընդհանուր ընթացքի մասին: Կամենում եմ հնարաւորութիւն տալ գնահատելու Եղեսիայի եկեղեցու հաստատութեան զրոյցի իսկական պատմական նշանակութիւնը և միևնոյն ժամանակ օգնել հասկանալու այն մի քանի երևոյթները, որոնց հետեանքով Եփրատի հովտի քրիստոնէութիւնը տարբերւում է Միջերկրական ծովի քաղաքների քրիստոնէութիւնից:

Եղեսիայի քրիստոնէական համայնքի գոյութիւնը Եկեղեցու պատմութեան մէջ իսկապէս կարևոր ղէպք է: Եղեսիան հին քրիստոնէական կեանքի միակ կենդրոնն էր, ուր քրիստոնեաները յունարէն չէին խօսում: Ասորիքում Անտիոքի եկեղեցին, որ ամենահին համայնքներից մէկն էր, որքան մեղ յայտնի է, ըստ ամենայնի յունական էր: Այն վայրերում, ուր բնակիչները խօսում էին սեմիտերէն, կարծում եմ, Աւետարանը յունարէն չէ քաղուղուել:

Երբ քրիստոնէութիւնը արմատ բռնեց Եղեսիայում, ուր ասորերէն էին խօսում, տեղական կուլտուրայի ու հարստութեան (արքայական տուն) հետ մասին շրջապատուեց այդ քրիստոնէութիւնը բոլորովին այլ մթնոլորտով: Յոյն լեզուի փոխանակ այստեղ կիրառւում էր ասորականը և եկեղեցին ընդունեց ազգային բնոյթ: Ծուտով Եղեսիան յայտնեց, որ ինքն վայելում է մեր Տիրոջ առանձին հովանաւորութիւնը: Պնդում էին, որ քաղաքը քրիստոնեայ է դարձել Աղղայի ձեռքով, որ 72 աշակերտներից էր, և որպէս թէ ուղարկուել էր այնտեղ ի պատասխանի Արգար Թադաւորի առ Տէրն մեր ղիմումին: Դեռ էլ աւելին, պնդում էին, թէ ինքն Տէրը պատասխանեց Արգարին խոստանալով, որ Եղեսիան օրհնուած է և թշնամիները նրան բնաւ չեն տիրի:

Եւսերիոսը իւր Եկեղեցական Պատմութեան մէջ (Ա. 13), ընդունել է Աղղայի ու Արգար Թադաւորի մասին այս զրոյցը: Այս զրոյցը սերտ կապուած է Քրիստոսի իսկական խաչի ու պատկերի գիւտի աւանդութիւնների հետ: Բայց այս զրոյցը, որ զբաղւում է «Վարդապետութիւն Աղղայի» գրքի մէջ պատմաբանի համար յիշուելի թանկագին աղբիւր է: Անկասկած այդ զրոյցը կազ-

մուած է Եդեսիայում, և ներկայ ձևակերպութիւնը ստացել է չորրորդ դարի վերջին և Ռաբբուլայի ¹⁾ վերանորոգութիւնից (րեֆօրմ) քիչ առաջ: Հեղինակի ժամանակագրութիւնը թէև սխալ է և նա հմուտ չէ երևում քաղաքական և եկեղեցական պատմութեան, բայց նա տեղեակ է իւր նկարագրած վայրերին: Դեռ թարմ էին յիշողութիւնները տեղական եկեղեցու կառավարութեան մասին՝ երբ նա գրում էր. իսկ նրա գործող անձերի անունները հին հեթանոսական յորջորջումների իսկական հետքեր են կրում: Բացի սրանից, համեմատաբար այն այնքան մօտ է Եդեսիայի եկեղեցու սկզբնաւորութեան, որքան պատմելու ձևը բովանդակում է աւելի հին և աւելի պատմական զրոյցի անաղարտ հատուածներ: Այս հատուածները բաւական անյարիր կերպով են յարմարւում իսկական պատմութեան հետ, բայց այդ իսկ պատճառով էլ լիովին կարող ենք վստահ լինել, որ այդ հատուածները «Աղդայի վարդապետութեան» հեղինակի սարքածները չեն:

Թոյլ տուէք ինձ համառօտիւ պատմել այդ հին զրոյցը: Արգար Ուկկաման, այսինքն, Արգար-Սևը, որ վախճանուել է Քրիստոսի 50 թուին, երկար ժամանակ (30—50 տարի) թագաւորելուց յետոյ, դեսպան ուղարկեց Սարինոսի մօտ, որ Տիբերիոս կայսրի տեղապահն էր Ելեթերոպօլում ու Պաղեստինում: Ի միջի այլոց՝ կարող ենք նկատել, որ Ելեթերոպօլը այդպէս կոչուեց առաջին անգամ Սեպտիմոս Մեվերոսից՝ Քրիստոսի 200 թ. և որպէս վարչական կենդրոն նա նշանակութիւն ստացաւ յատկապէս այդ ժամանակից սկսած: Արգարի ուղարկած դեսպաններն էին ազնիւ Մարիհաբը (Maribab), Շամշագրամն (Shamechagram) և թարգման Հաննանը (Hannan), որոնք վերադարձին, երբ անցնում էին Երուսաղէմի մօտով, Յիսուս Մեսիայի համբաւը լսեցին և վճռեցին մտնել քաղաք, և երբ մտան քաղաք, տեսան Մեսիային, իրանք և իրանց հետ եղած բազմութիւնը ուրախացան. նրանք տեսան շուրջ խմբուած հրէաներին, որոնք խորհում էին, թէ ինչպէս վարուեն Մեսիայի հետ, որովհետեւ տեսնում էին որ իրանց ժողովրդից շատերը հաւատում են նրան: Նրանք Երուսաղէմում տաան օր կացան և Հաննան թարգմանիչը զրեց այն բոլորը, ինչ որ Մեսիայի ասածներից տեսան: Նրանք վերադարձան Արգար թագաւորի մօտ, որը լսելով այս ամենը, կամեցաւ անձամբ Պաղեստին գնալ, բայց վախեցաւ հռովմէական տիրապետութեան միջով անցնել, նա Հաննան թարգմանչի միջոցով նամակ ուղարկեց Յիսուսին, Հաննանը Յիսուսին հրէաների աւագ Գամաղիէլի տանը գտաւ:

1) Ռաբբուլայն Եդեսիայի եպիսկոպոս էր 414—422-ից մինչև 455 թ.

Նամակը որ սկսւում էր բառերովս. «Սեն Արգար, բարերար Բժիշկ¹⁾ Յիսուսին», ցոյց է տալիս, թէ Արգարը արդէն առաջուց համոզուել էր, որ Յիսուսը կամ երկնքից իջած Աստուած է կամ Աստուծոյ Որդի: Արգարը խնդրում է Քրիստոսին գալ Եղեսիա, այնտեղ ապրել և իրան բժշկել տկարութիւնից, որից տանջւում է ինքն Արգարը:

Յիսուս երբ այս նամակը ստացաւ, պատասխանեց Հաննան թարգմանին. «Գնա և ասա քեզ ինձ մօտ ուղարկող տիրոջդ. «Երանի քեզ, որ ինձ չտեսած՝ ինձ հաւատացիր, որովհետեւ իմ մասին գրուած է, թէ նրանք, որոնք տեսնում են ինձ՝ չեն հաւատայ ինձ, նրանք որ չեն տեսնում ինձ, կը հաւատան: Իսկ ինչ որ գրել ես ինձ, խնդրելով որ գամ քեզ մօտ, իմացիր, ինչի համար որ եկել եմ այստեղ, վախճանին մօտենում է, և կը համբառնամ ինձ ուղարկող Հօրս մօտ: Համբարձուելիս կուղարկեմ քեզ մօտ իմ աշակերտներից մէկին, նա կը մխիթարի և կը բժշկի քո տկարութիւնը, և կը դարձնի զէպի յաւիտենական կեանք այն բոլորին, որոնք քեզ հետ են, իսկ քո քաղաքը օրհնուած կը լինի ու ոչ մի թշնամի չի տիրի նրան»:

Այսպէս էր Յիսուսի նշանաւոր նամակը զէպի Արգար: Այդ նամակը ունի հետեւեալ նշանաւոր պատմութիւնը: Այս զրոյցը, հաւանօրէն, շատ վաղուց թարգմանուած է յունարէն և ամբողջ նամակը, բացի վերջին բառերից, ամփոփել է Եւսեբիոսը իւր Եղեղեցական Պատմութեան մէջ: Այս զրոյցը իւր գրքի մէջ ընդունող Եւսեբիոսը, շատ լաւ գիտէր թէ յետագայում ինչ կը նշանակի Եղեսիայի անյաղթելի մնալու խոստումը: Այնպիսի զիտնական պատմիչը չէր կարող մոռացած լինել, որ Տրայիանոսի օրով Լուսիոս Կվինտոսը աւերել է Եղեսիան և 100 տարի յետոյ կայսրութեանը միացրել է Օսրոնի գաւառը: Հինգերորդ դարում Հելասիոս պապը իւր կոնդակով ամբողջ թղթակցութիւնը կեղծ հրատարակեց: Բայց այս զրոյցը դիւր էր եկել և ղեռ դիւր է գալիս հաւատացեալների մեծ բազմութեան: Բօղլէեանեան մատենադարանում կան չորրորդ կամ հինգերորդ դարի պապերուսի յունարէն պատառիկներ, որոնք բովանդակում են այս զրոյցը: Իսկ երեք տարի առաջ գտնուել է Եփեսոսում մի գրութիւն, որի մէջ կան Արգարի նամակը Քրիստոսին և Քրիստոսին՝ Արգարին, գրուած Եւսեբիոսին համարեա ժամանակակից նոր յունարէն տառերով:

1) «Բարերար բժիշկ» է ասորերէնից Թարգմանութեան մէջ. բայց Եւսեբիոսի մէջ (Եկեղ. Պատմ. Ա. 43) կարդում ենք «Բարերար Փրկիչ [Σωτήρ]»: Ազգայի վարդապետութեան այս մասը, հաւանօրէն, հնազոյն յիշատակարանն է, որի մէջ մեր Տէրը «Բարերար բժիշկ» է կոչուել:

Նրկու դոկումենտների մէջ էլ կայ խոստումը Արգարի քաղաքին: Գրիստոսի նամակը յարգուած էր որպէս համայնի՝ և բարեպաշտ մարդիկ արտագրում ու կրում էին իրանց վերայ, որպէս պաշտպանող կայծակից, կարկաճից, ծովի և ցամաքի վտանգներից, դիշերն ու ցերեկը և խաւար տեղերում:

Դառնանք Աղդայի վարդապետութեանը: Ստանալով Արգարին գրած թուղթը՝ Հաննան թարգմանը լաւագոյն ներկերով նկարեց և եղեսիա բերեց մեր Տիրոջ պատկերը, որ Արգարը զնանդեց ամենանշանաւոր տեղում: Յետին ժամանակում այս պատկերը դարձաւ զարմանալի զրոյցների առարկայ. հաւատում էին որ այն հրաշքով է եղել, առանց մարդկային ձեռքի մասնակցութեան և այս աւանդութիւնը սերտ կերպով զուգորդւում է Վերոնիքայի մասին զրոյցի հետ: Աղդայի վարդապետութիւնը շարունակում է, թէ ինչպէս համարձուծից յետոյ Յուդա Թովմասը Արգար թագաւորի մօտ ուղարկեց Աղդային, որ 72 աշակերտներից մէկն էր: Աղդայի քարոզութեան մեծ մասը կարող ենք բաց թողնել: Բայց մի քանի մասերը ուշադրութեան արժանի են: Երբ Աղդան եկաւ Եղեսիա՝ իջևանեց Պաղեստինցի հրէայ Տորիայի որդի Տորիայի տանը: Տորիան տարաւ Աղդային Արգարի մօտ: Ի հարկէ Արգարը իսկոյն բժշկուեց և քրիստոնեայ դարձաւ իւր բազմաթիւ հպատակների հետ, որի հետ էր հրէայ առևտրական համայնքը: Պաղեստինի հրէաները, որոնք խաչել էին մեր Տիրոջը, բնականաբար ենթարկուեցին խիստ դատապարտութեան, բայց զարմանալի է, որ Եղեսիայի հրէաները ներկայացուած են նոր վարդապետութեան համակիրներ:

Թարգ. Յուսիկ արևայիօրացս

(Շարունակելի)

